Նախագիծ

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
թիվ .....

ք. Երևան «___» _____ 2016թ.

«Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպությունը (ՄԶՄԿ), ի դեմս գործադիր տնօրեն Արմեն Գալստյանի, որը գործում է Կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և **..... ընկերությունը**, ի դեմս ....., որը գործում է Կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին ծառայությունների վճարովի մատուցման սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել Պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները (այսուհետ՝ Ծառայություններ), իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել պատշաճ մատուցված Ծառայությունների դիմաց:

1.2. Կատարողը, Պատվիրատուի կողմից Եվրոպական միության ֆինանսավորմամբ իրականացվող «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագրի շրջանակներում, իրականացնում է տնային տնտեսությունների հետազոտություն (այսուհետ՝ Հետազոտություն) սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների տարածվածությունն ու պատճառները բացահայտելու նպատակով՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված 1-ում սահմանվող ծառայությունների մատուցման տեխնիկական առաջադրանքի և սույն Պայմանագրի 4.2 կետում սահմանված՝ հետազոտության իրականացման ժամանակացույցի (այսուհետ՝ Ժամանակացույց):

1.3. Ծառայությունները մատուցվում են Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում:

1.4. Կատարողի կողմից Ծառայությունների մատուցման ընթացքում ստեղծված բոլոր արդյունքները պատկանում են Պատվիրատուին:

2. Կատարողի պարտականությունները և իրավունքները

2.1. Կատարողը պարտավոր է Պայմանագրի 1.1 կետում նշված Ծառայությունները մատուցել պատշաճ, ըստ անհրաժեշտ որակի, անհրաժեշտության դեպքում իր իսկ միջոցներով վարձել մասնագիտական և տեխնիկական ռեսուրսներ:

2.2. Կատարողը պարտավոր է սույն Պայմանագիրը կնքելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի համաձայնեցմանը ներկայացնել Ժամանակացույցի նախագիծը:

2.3. Կատարողը պարտավոր է Պատվիրատուի կողմից Ժամանակացույցի նախագծի վերաբերյալ առաջարկներն ու դիտողությունները ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում կատարել համապատասխան լրացումներ և/կամ փոփոխություններ Ժամանակացույցի նախագծում:

2.4. Կատարողը պարտավոր է մասնակցել աշխատանքային քննարկումների, կլոր սեղանների, ներկայացնել հետազոտության արդյունքները Պատվիրատուի կողմից կազմակերպած հաշվետու հանդիպման ընթացքում:

2.5. Կատարողն իրավունք ունի Պատվիրատուից պահանջել ժամանակին վճարելու Պայմանագրի գինը՝ համաձայն Պայմանագրի 5-րդ բաժնում սահմանված կարգի:

2.6. Կատարողն իրավունք ունի Պատվիրատուից պահանջել օրական 0.5 տոկոս տույժ՝ Պայմանագրի 5-րդ բաժնում նշված գումարների նկատմամբ, եթե Պատվիրատուն խախտել է Պայմանագրի 5-րդ բաժնի պայմանը:

3. Պատվիրատուի պարտականությունները և իրավունքները

3.1. Պատվիրատուն պարտավոր է Պայմանագրի 1.1 կետում նշված Ծառայությունների մատուցման համար Կատարողին ապահովել անհրաժեշտ մեթոդական օժանդակություն:

3.2. Պատվիրատուն կարող է Ժամանակացույցի նախագիծը ստանալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, Կատարողին ներկայացնել իր դիտողություններն ու առաջարկները:

3.3. Պատվիրատուն պարտավոր է կատարել վճարումներ Կատարողին Պայմանագրի 5-րդ բաժնում սահմանված կարգով:

3.4. Պատվիրատուն իրավունք ունի պահանջել Կատարողից շտկել Պայմանագրի 1.1. կետում նշված ծառայությունների կատարման ընթացքում հայտնաբերված թերությունները՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

3.5. Պատվիրատուն իրավունք ունի հետևել և միջամտել Ծառայությունների մատուցման հետ կապված Կատարողի կողմից կատարվող աշխատանքներին:

3.6. Պատվիրատուն իրավունք ունի Կատարողից պահանջել օրական 0.5 տոկոս տույժ՝ Պայմանագրի 5-րդ բաժնում նշված գումարների նկատմամբ, եթե Կատարողը խախտել է Պայմանագրի 5-րդ բաժնի պայմանը:

4. Պայմանագրի գործողության, ծառայությունների մատուցման ժամկետները և ծառայությունների ընդունումը

4.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված ծառայությունների պատշաճ մատուցման ավարտը ու կողմերի միջև ծառայությունների տրամադրման հետ կապված հարաբերությունների դադարումը, բայց ոչ ուշ, քան 2017թ. փետրվարի 28-ը:

4.2. Կատարողի կողմից Պայմանագրի 1.1 կետում նշված Ծառայությունների մատուցման համար ժամկետները սահմանվում են հետազոտության իրականացման ժամանակացույցով:

4.2.1. Պայմանագիրը կնքելուց հետո, 10 աշխատանքային օրվա ընթացքում, Կատարողը Պատվիրատուի համաձայնեցմանն է ներկայացնում Ժամանակացույցի նախագիծը:

4.2.2. Պատվիրատուն, Ժամանակացույցի նախագիծը ստանալուց հետո եռօրյա ժամկետում, Կատարողին է ներկայացնում դիտողություններ ու առաջարկներ:

4.2.3. Կատարողը նախագծի վերաբերյալ առաջարկներն ու դիտողությունները ստանալուց հետո իրականացնում է համապատասխան լրացումներ և/կամ փոփոխություններ Ժամանակացույցի նախագծում:

4.2.4. Լրամշակված Ժամանակացույցը Պատվիրատուին վերադարձնելուց հետո այն համարվում է հաստատված:

4.2.5. Դիտողություններ կամ առաջարկներ չներկայացվելու դեպքում Ժամանակացույցը համարվում է համաձայնեցված:

4.3. Կատարողն իրավունք ունի Ծառայությունների մատուցումն ավարտել Ժամանակացույցով սահմանված ժամկետներից շուտ:

4.4. Ծառայությունների տրամադրման հետ կապված հարաբերությունները դադարում են Կողմերի միջև Պայմանագրով սահմանված Ծառայությունների հանձնման-ընդունման ակտի ստորագրումից հետո:

5. Պայմանագրի գինն ու վճարման կարգը

5.1. Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է …….. ՀՀ դրամ:

5.2. Պայմանագրի 5.1 կետում սահմանված գինը չի ներառում ԱԱՀ-ը: Կատարողը, Ծառայությունների մատուցման սույն Պայմանագրի շրջանակներում, Պատվիրատուի կողմից տրամադրված հարկազատման տեղեկանքի հիման վրա ազատվում է ԱԱՀ վճարելու պարտավորությունից:

5.3. Պայմանագրի 5.1 կետում սահմանվող գումարը Պատվիրատուն Կատարողին է վճարում 3 չափաբաժիններով՝

5.3.1. Պայմանագրի գնի 20% վճարվում է Կատարողին որպես կանխավճար՝ Պայմանագրի ստորագրումից և Ժամանակացույցի համաձայնեցումից հետո հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

5.3.2. Պայմանագրի գնի 30% վճարվում է Կատարողին Հետազոտության դաշտային աշխատանքների արդյունքները Պատվիրատուի կողմից ընդունվելուց հետո՝ ներկայացված հաշիվ ապրանքագրի հիման վրա:

5.3.3. Պայմանագրի գնի 50% վճարվում է Կատարողին Հետազոտության զեկույցը Պատվիրատուի կողմից ընդունվելուց հետո՝ ներկայացված հաշիվ ապրանքագրի հիման վրա:

5.4. Վճարումները կատարվում են Կատարողի կողմից հաշիվ ապրանքագրի ներկայացումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ Կատարողի կողմից ներկայացրած բանկային հաշվին փոխանցման եղանակով:

6. Տվյալների գաղտնիություն

6.1. Կատարողի կողմից Պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման ընթացքում ձևավորված տեղեկություններն ու տվյալները, ենթակա չէ հրապարակման և այն չի կարող տրամադրվել երրորդ անձանց, բացառությամբ այն դեպքերի, երբ Պատվիրատուն գրավոր կտա իր համաձայնությունը:

7. Անհաղթահարելի ուժ

7.1. Պայմանագրով սահմանված պարտավորությունները ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով (ֆորս մաժոր), որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել դա պայմանագրի կնքման պահին:

7.2. Այն Կողմը, որի պարտականությունների կատարումը ընդհատվում է վերոհիշյալ պատճառներով, պարտավոր է ծանուցել մյուս Կողմին պարտականությունների ընդհատման կամ չկատարելու և դրա պատճառների մասին:

7.3. Եթե ֆորս-մաժորային իրավիճակը շարունակվում է մեկ ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուր իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, այդ մասին նախապես գրավոր տեղեկացնելով մյուս Կողմին: Նման դեպքում Կողմերի միջև փոխադարձ վերջնահաշվարկի օր է համարվում պայմանագիրը լուծելու օրը:

8. Վեճերի լուծման կարգը

8.1. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:

8.2. Պայմանագրով չկարգավորված բոլոր հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Պայմանագիրը կարող է փոփոխվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ գրավոր կարգով:

9.2. Պայմանագիրը կազմված է հայերեն, բաղկացած է 4 էջից, երկու օրինակից: Պայմանագրի Հավելված 1-ը, կազմված է անգլերեն, բաղկացած է 9 էջից, երկու օրինակից: Յուրաքանչյուր օրինակ ունի հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմի մոտ գտնվում է պայմանագրի մեկ բնօրինակ:

10. Կողմերի վավերապայմաններն ու ստորագրությունները

Պատվիրատու՝ **«Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ**	**Կատարող՝** **.....**
Հասցե՝ ք. Երևան, Սայաթ Նովա 19	**Հասցե՝** .....
ՀՎՀՀ՝ 01225144	**ՀՎՀՀ՝** .....
Բանկ՝ Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ	**Բանկ՝** .....
Հ/Հ՝ ՓԲԸ 23800 - 114270800	**Հ/Հ՝** .....
Գործադիր տնօրեն	Գործադիր տնօրեն
Արմեն Գալստյան	.....
Կ.Տ.	Կ.Տ.